

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**



**Կ Ա Ր Գ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**

**ՀԻՄՆԱԴԻՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ**

**ՄԱՐԶԱ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՏՈՒՑՄԱՆ**

Հաստատված է

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 18-ի նիստի թիվ 05/01 որոշմամբ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԱՐԶԱ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**Կ Ա Ր Գ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. ««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի մարզա-ուսումնական վճարովի ծառայությունների մատուցման կարգ»-ը (այսուհետ՝ **Կարգ**) հանդիսանում է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ **ՀԱՊՀ**) Կապանի մասնաճյուղի (այսուհետ՝ **Մասնաճյուղ**) ներքին իրավական ակտը, որով սահմանվում են **Մասնաճյուղի** մարզա-ուսումնական վճարովի ծառայությունների մատուցման պայմանները և վճարման կարգը:
- 1.2. Սույն կարգը մշակված է ՀՀ քաղաքացիական օրենսդրության, **ՀԱՊՀ** կանոնադրության, **Մասնաճյուղի** կանոնադրության և **ՀԱՊՀ**-ի մարզա-ուսումնական վճարովի ծառայությունների մատուցման կարգի հիման վրա:
- 1.3. Մարզա-ուսումնական վճարովի ծառայությունները (այսուհետ՝ **Ծառայություններ**) իրականացվում են **Մասնաճյուղի** առավելապես «Հումանիտար առարկաների և մարմնակրթության» ամբիոնի դասախոսների ուժերով՝ **հանդբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս** և այլ մարզաձևերով:

- 1.4. Պայմանագրային հիմունքներով **Ծառայություններից** կարող է օգտվել ցանկացած անձ (այսուհետ՝ **մարզիկ**) կամ անձանց խումբ (այսուհետ՝ **մարզախումբ**):
- 1.5. Պայմանագիրը կնքվում է **Մասնաճյուղի** և **մարզիկի** կամ **մարզախմբի** ներկայացուցիչի, իսկ **մարզախմբի** անդամների՝ միևնույն կազմակերպությունում աշխատելու դեպքում, նաև կազմակերպության ղեկավարի հետ:
- 1.6. **Մասնաճյուղի** ուսանողները և աշխատողները **Ծառայություններից** օգտվում են անվճար, իսկ աշխատողների երեխաները՝ 50% զեղչով:
- 1.7. **Մասնաճյուղի** ուսանողները մարզումներին ներկայանում են ուսանողական տոմսով կամ ուսանող հանդիսանալու փաստը հաստատող այլ փաստաթղթով:
- 1.8. **Մարզախմբերի** հետ մարզումները կազմակերպվում են հետևյալ խմբերով՝
  - 1) ուսանողական,
  - 2) սպորտային կատարելագործման,
  - 3) առողջարարական,
  - 4) ուսուցողական,
  - 5) սիրողական՝ մարզիչով,
  - 6) սիրողական՝ առանց մարզիչի:
- 1.9. **Մարզախմբերի** հետ պարապում են դասախոսները և մարզիչները (այսուհետ՝ **մարզիչ**):

## 2. Ծառայություններից օգտվելու կարգը

- 2.1. **Մարզիկը Ծառայություններից** օգտվելու համար նախապես **Մասնաճյուղի** տնօրենի անունով ներկայացնում է հայտ (դիմում)՝ կցելով առողջական վիճակի մասին տեղեկանքը: Հայտը (դիմումը) ներկայացվում է **Մասնաճյուղի** Ընդհանուր բաժին: Հայտում նշվում է **մարզիկի** ընտրած մարզաձևը և նախընտրած ժամը: Հայտն (դիմումն) ընդունելու դեպքում **մարզիկի** հետ կնքվում է համապատասխան պայմանագիր:  
 Հայտը (դիմումը) չի ընդունվում, եթե այն ներկայացվում է առանց առողջական վիճակի մասին տեղեկանքի:
- 2.2. **Ծառայություններից մարզախմբի** օգտվելու համար **մարզախմբի** ներկայացուցիչը (կազմակերպության ղեկավարը) նախապես **Մասնաճյուղի** տնօրենի անունով ներկայացնում է հայտ (դիմում)՝ կցելով մարզախմբի ցուցակը և անդամների առողջական վիճակի մասին տեղեկանքները: Հայտը (դիմումը) ներկայացվում է **Մասնաճյուղի** Ընդհանուր բաժին: Հայտում նշվում է **մարզախմբի** ընտրած մարզաձևը և նախընտրած ժամը: Հայտն (դիմումն) ընդունելու դեպքում մարզախմբի ներկայացուցիչի (կազմակերպության ղեկավարի) հետ կնքվում է համապատասխան պայմանագիր:  
 Հայտը (դիմումը) չի ընդունվում, եթե այն ներկայացվում է առանց առողջական վիճակի մասին տեղեկանքների:
- 2.3. Մարզումների համար սահմանվում է 60, 90 կամ 120 րոպե:
- 2.4. **Ծառայությունների** գինը սահմանվում է **Կարգի** Հավելվածով 1-ով սահմանված կարգով: Ծառայությունների վճարը կատարվում է ՀՀ դրամով: Վճարումը կատարվում է կանխիկ կամ փոխանցումով՝ **Մասնաճյուղի** բանկային հաշվին:
- 2.5. **Մարզիկը (մարզախմբի անդամը)** մարզումների է ներկայանում անցագրով և նշված ժամին, սթափ վիճակում:
- 2.6. Արգելվում է մարզասրահում ծխելը և ոգելից խմիչքների օգտագործումը:
- 2.7. Մարզումներն իրականացվում են երկուշաբթիից ուրբաթ օրերին ժամը 12.00-ից մինչև 22.00-ն, իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 22.00-ն,:

2.7. Մարզումներն իրականացվում են **մարզիչի** ղեկավարությամբ՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

### **3. Մարզիկի (մարզախմբի անդամի) իրավունքները եվ պարտականությունները**

3.1. **Մարզիկն (մարզախմբի անդամն)** իրավունք ունի.

3.1.1. ստանալ պատշաճ որակի ծառայություն,

3.1.2. օգտվել ընտրած մարզաձևի համար նախատեսված գույքից, հանդերձարանից և մարզումների համար անհրաժեշտ այլ առկա միջոցներից:

3.2. **Մարզիկը (մարզախմբի անդամը)** պարտավոր է.

1) պարապմունքներին ներկայանալ անցագրով,

2) ենթարկվել մարզիչի ցուցումներին և կարգադրություններին,

3) **Մասնաճյուղի** գույքին վերաբերվել խնամքով: Գույքը վնասելու դեպքում **մարզիկը (մարզախմբի անդամը)** կրում է նյութական պատասխանատվություն,

4) պահպանել **Մասնաճյուղի** ներքին կարգապահության կանոնները և հարգալից վերաբերմունք ցուցաբերել աշխատողների նկատմամբ,

5) մարզումներին ներկայանալ համապատասխան սպորտային համազգեստով:

### **4. Մարզիչի իրավունքներն ու պարտականությունները**

4.1. **Մարզիչն** իրավունք ունի.

4.1.1. **Մարզիկի (մարզախմբի անդամի)** կողմից **Մասնաճյուղի** ներքին կարգապահության կանոնները և մարզումների սահմանված ընթացակարգը խախտելու, վճարումը չկատարելու, ոգելից խմիչք օգտագործած վիճակում մարզման ներկայանալու դեպքերում դադարեցնել մարզումները,

4.1.2. ստուգել **մարզիկի (մարզախմբի անդամի)** անցագիրը և առողջական վիճակի մասին տեղեկանքի առկայությունը:

4.2. **Մարզիչը** պարտավոր է՝

4.2.1. նշանակված ժամին դիմավորել **մարզիկին (մարզախմբին)**, ուղեկցել հանդերձարան և մարզասրահ,

4.2.2. ապահովել **մարզիկի (մարզախմբի անդամի)** անվտանգությունը և կարգապահությունը՝ հանդերձարանում, լողարանում և մարզումների ընթացքում,

4.2.3. մարզումներն իրականացնել **մարզիկի (մարզախմբի անդամի)** առողջական մասին տեղեկանքին համապատասխան,

4.2.4. ժամանակին լրացնել մարզումների գրանցամատյանը,

4.2.5. հետևել սիրողական (առանց մարզիչի) խմբերի և **մարզիկների** մարզումներին:

4.3. **Մարզիչն** աշխատում է՝ ուսանողական, առողջարարական, սիրողական (մարզիչով), ուսուցողական և սպորտային կատարելագործման խմբերի հետ:

### **5. Եզրափակիչ դրույթներ**

5.1. **Կարգը** հաստատվում, փոփոխվում և լրացվում է **Մասնաճյուղի** գիտական խորհրդի որոշմամբ:

5.2. **Կարգն** ուժի մեջ է մտնում գիտական խորհրդում քվեարկությամբ հաստատվելուց հետո հաջորդ օրը:

**ՍԱԿԱԳՆԵՐ**

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի մարզադահլիճի մասնաշենքում մարզա-ուսումնական վճարովի ծառայությունների մատուցման

Հ/Հ	Մարզածև	Ծառայության տեսակը	Չափման միավորը	Միավորի գինը՝ (ներառյալ ԱԱՀ)	Այլ նշումներ
1.	Հանդերոլ	Դահլիճի տրամադրում	1 ժամ	7 000 դր	
2.	Վոլեյբոլ	Դահլիճի տրամադրում	1 ժամ	7 000 դր	
3.	Բասկետբոլ	Դահլիճի տրամադրում	1 ժամ	7 000 դր	
4.	Մինի ֆուտբոլ	Դահլիճի տրամադրում	1 ժամ	7 000 դր	
5.	Սեղանի թենիս	Սեղանի տրամադրում	1 ժամ	500 դր	մեկ սեղանը